

67

Է. ԱԿՆՈՒՆԻ

ԴԵՊՈՒ ԵՐԿԻՐ

ՅԻՆԱՏԱԿ  
ՊԱՆԴՈՒԻՑ ՀԱՅԵՐԻՆ

ՀԲԵՏ. No 17  
ՀԱՅԵՐԻՆԻՔԻ

1911  
ՊԵՍՔԸՆ

891.99

Ա-39

07 JUN 2005

06 ԱԷԸ 2010

891.99

Ա-39

Է. ԱԿՆՈՒՆԻ

# ԴԷՊՈՒ ԵՐԿԻՐ

ՅԻՇԱՏԱԿ  
ՊԱՆԴՈՒԻՑ ՀԱՅԵՐԻՆ

5739


ՀՐԱՏԱՐԱՆՈՒԹՅՈՒՆ No 17  
«ՀԱՅՐԵՆԻԲ»-Ի

1911  
ՊԹԱԲԸՆ

Լ 5 .02. 2013

18254

ԴԷՊՈՒ ԵՐԿԻՐ  
ՂԱՐԻՔ ՀԱՅԵՐԻՆ  
ՊԱՆԴՈՒԽՏ ՀԱՅԵՐԻՆ  
ԵՐԱԶ-ԽՕՍԳԵՐ



1776-2001

# Դ Է Պ Ի Ե Ր Կ Ի Ր

(1900)

Ամեն տեղ է որոնում հայը ապաստան,  
Բացի այն երկրից, որ կոչւում է Հայաստան:

Գնում է հայը՝ կնձիւրը ճակատին, յոյզը սըր-  
տում:

—Ո՞ւր, հայ շինական:

—Ղարիբութիւն:

Գնաց: Իսկ այնտեղ, ինուսի կիսաւեր գիւ-  
ղերում, պառաւ մայրը՝ մէջքը կորացած, հա-  
լումաչ կինը՝ ծծկերը գրկին, և չորս մատղաշ-  
ները՝ բոբիկ և ցնցոտիապատ, նրան են սպա-  
սում: Նրան են սպասում, երբ պարտատէրն է  
գուռը բաղխում, կամ երբ հարկահանը՝ որոտալի  
ձայնով՝ շանթ ու կրակ է թափում: Երեխանե-  
րի կանչը՝ «հա՛ց» և դատարկւած գոմից նւաղած  
եզան բառաչիւնը՝ «խո՛տ» — դադար չունի: Տաշ-  
տում՝ հաց, գոմում՝ խոտ չկայ, — նրան են սպա-  
սում: Գիշերը անձրև եկաւ, հողը փափկեց, ար-  
տը վարող չկայ. նրան են սպասում: Տանեցու

աչքը ջուր կտրեց: Պառաւ տատը թոռների բօ-  
շուշնջ կտրեց՝ ձէթը ժամ տարաւ, լուս վառեց—  
բայց էլի խաբար չկայ: Ու ժամից դառնալիս՝ իր  
ցաւը նա այսպէս երգեց՝

Տուն կայ՝ պահող չկայ,

Արտ կայ՝ վարող չկայ...

Գնում է հայը՝ վէրքը ճակատին, երկիւղը  
սրտում:

—Ո՞ւր, հայ երիտասարդ:

—Օտար աշխարհ:

Եւ եգիպտոսն ու կիպրոս, կովկասն ու Բալ-  
կան հերիք չեղան հալածական պանդխտին: Ծո-  
վեր անցաւ, Ամերիկա հասաւ: Օտար աշխար-  
հում նրա լեզուն բացւեց. ցոյց տւեց իր մարմնի  
վէրքերը, սրտի խոցերը: Անպաճոյճ, բայց յու-  
ղիչ լեզուով պատմեց ծերուկ հօր սպանութիւնը՝  
կաթւածահար մօր առաջ, մատաղ քրոջ փախց-  
նելը. նկարագրեց հարևանի թալանը, ամբողջ  
գիւղի աւերումը և իր յուսահատ փախուստը:  
Մարդիկ յուզւեցին, կսկծացին: Փախստականին  
ապաստան տւին, քաջալերեցին:

Բայց նա ոչ առաջինն էր և ոչ վերջինը: Օր  
չանցաւ, որ պանդուխտ չգար: Ամիս չանցաւ,  
որ նոր քաղաք չերևար: Հները նորերին գրաւե-  
ցին: Օտար աշխարհի ճամբան՝ ջրի ճամբայ չի-  
նեցին: Գիւղ չմնաց առանց փախստականի, օջախ  
չմնաց առանց զարիբականի: Եւ ծերունի պապը՝  
մարած օջախի մօտ նստած, արտասուքը սրբեց  
ու հանգած օղային այս գանգատը ուղղեց՝

Մաճ ունինք՝ մաճկալ չունինք,

Ընտանիք ունինք՝ ջահիլ չունինք...

Գնում է հայը՝ բողոքը ճակատին, վրէժը սըր-  
տում:

—Ո՞ւր, հայ հայրենասէր:

—Սգատ երկիր:

—Ինչո՞ւ համար:

—Գործելու համար:

«Այնտեղ, աղատների երկրում, ուր չեն կըտ-  
րում այն կոկորդը՝ որ բողոք է հնչեցնում և այն  
ձեռքը՝ որ ստրուկի շղթան է փշրում, այնտեղ  
մենք բարձրաձայն քարոզով վառ կը պահենք հա-  
մազգային վրէժի սրբազան կրակը՝ իբրև վերջին  
աւանդ անմեղ զոհերի այնտեղ՝ ինչպէս մարմ-  
նացած բողոք՝ կը պատկերացնենք դիւստածիկ հայ-  
րենիքի սարսափները — սարսափներ որոնց հա-  
րիւրերորդ մասն անգամ չգիտէ քաղաքակիրթ  
աշխարհը. ազատ ու անկախ՝ այնտեղ մենք կու-  
սումնասիրենք հայրենիքի փրկութեան ճանա-  
պարհները, կը կրթենք և կը պահպանենք տարա-  
գիր մատաղ հայ սերունդը օտար ազդեցութիւ-  
նից. այնտեղ, զգայուն մարդկանց առաջ որոնք  
լսել, զգալ, ցասման որոտ արձակել գիտեն,  
մենք բաց կանենք նահատակ ժողովրդի սիրտը,  
չանթ ու անէծք կը թափենք, մինչև որ արար-  
աշխարհ տակնուվրայ լինի, մինչև որ ունէ տե-  
ղից մեզ օգնութիւն կը հասնի»:

Ու գնաց: Նա մենակ չէր: Նրան հետևեցին  
ընկերներ, ծանօթ ու անծանօթ գործիչների ամ-  
բողջ խմբեր, տարբեր ծրագրերով, տարբեր ճա-  
նապարհներով: — Սկսեցին լրագիրներ, հան-  
դէսներ, հիմնեցին դպրոցներ՝ ընկերութիւն-  
ներ, տեղի ունեցան ժողովներ, մերկացումներ,  
վերջապէս աղերսանքներ, դիմումներ: Եւրօպա,  
Ամերիկա, նոյն իսկ ստրկութեան երէկւայ հայ-

րենիքը, փարաւոններէ երկիրը՝ Լցեց ազգիցաւը Լացող գործիչներով ու բողոքողներով: Միայն Երկիրն էր, որ մնաց առանց բողոքի, առանց գործողների:

Եւ այն ժամանակ, երբ օտար աշխարհում՝ «շփոթեալ» հողի վրայ բուսած աղմուկն և իրարանցումը «սոսկալեմ» էր՝ վերածելով հայրենիքի ու գործի ընդհանուր շահերը խմբական և նոյն իսկ անհատական մանր հաշիւների, — նոյն այդ ժամանակ՝ երկրի մէջ լսուած էին բողոքի բոլոր կենդանարար ձայները, հանգչում ապրտամբութեան խարոյկները՝ վառւած անթիւ զոհերի ազատասէր շունչով: Երկրի խորքում կուռող չմնաց, ժողովրդի առաջ՝ բողոքող: Եւ Մուշի դաշտի կիսաւեր գիւղերում, յուսաբեկ, մոռցած, անընկեր մնացած ճարտիչը՝ գիւղի աշուղին կանչեց և խնդրեց այսպէս երգել իւր ազգի վիշտը՝

Ճրագ կայ, վառող չկայ,  
Ժողովուրդ կայ, սիրտ տուող չկայ...

Կե՛ղծ ժողովուրդ...

Ամէնքը գնացին: Մէկը իբրև բողոք՝ «անգրե-տած օլտի», միւսը՝ հարստահարած «շխարհի», երրորդը՝ «ալածակ» հաղափարի: Գնացին, որ աղերսեն, վկայեն անսիրտ, կուրացած աշխարհին քո վիշտը, տառապանքը, քո յուսահատ վիճակը: Իսկ դու՝ որբական մենակութեան մէջ՝ սպասում ես խարրիկների, օգնութեան, ազատութեան...

Գնացին և էլի գնում են.....

Յիսուն հազար գաղթականներ կովկասում, որոնք 5 տարուց իվեր մի անկիւն անգամ չունեն իրենց յոգնած գլուխը վայր դնելու համար. ան-

թիւ, անհամար հալածականներ եգիպտոս, կիպրոս, Ամերիկա, Եւրոպա, ցնցոտիապատ, թափառական, անտուն, անտէր՝ իբրև անխօս կենդանագիր հայրենիքի թշուառութեան. ցիրուցան որբեր Հայ աշխարհի բոլոր ծայրերից և այդ բոլորի հետ միասին՝ ամբողջ Հայաստանի ճոթու, յեղճոթի տարրը՝ ուսուցիչ, քարոզիչ, գրող, կուռող, յեղափոխական, վարդապետ, ինտէլիգենտ—բոլորն էլ երկրից դուրս, բոլորն էլ թափառական, աղերսանքը բերանին, ձեռքը մեկնած....

Որպի՛սի դարձ:

Պատմական վիթխարի դէպքերը միմեանց յաջորդեցին, մենք արեան գետեր տւինք, մեր նահատակների թւով աշխարհ գողդեցրինք: Իսկ այժմ... Այժմ արեան փոխարէն արտասուք ենք թափում, բողոքի տեղ՝ աղերսանք: Ժողովուրդ և հայրենիք պաշտպանելու փոխարէն՝ մեր թշուառ գոյութիւնն ենք պահպանում. թշնամու տեղ՝ իրար հետ ենք կուռում: Եւ կամ մեր խիղճը խաբելու համար, այն միջոցին, երբ ամբողջ Տարօնում մի հատ դպրոց, մի այբբենարան չէ մնացել, Հայ հայրենասէրները օտար երկրներում թերթեր են տպագրում, ճառեր են ասում, նոյն իսկ դըպրոց և ժողովարաններ են հիմնում: Հայաստանը — փա՛ռք այս նոր գիւտին — օտարութեան մէջ են փնտռում, իսկ նրա ապագան՝ աղերսանքների և տարագրութեան մէջ: Եւրոպան կշտացաւ, նոյն իսկ «յոգնեց» մեր Լաց ու կոծից, մեր ցնցոտիներից, իսկ մենք՝ ինքնախաբէութեան դիմակի տակ՝ շարունակում ենք թափառել և աղերսել, աղերսել և թափառել.

Ժողովուրդ էինք՝ թափառական դարձանք,  
Կուռողներ էինք՝ աղերսողներ դարձանք....

կայ, հայ մարդ, կայ :

Դա չէ այն ճանապարհը, որ տանում է դէպի փրկութիւն : Ազատագրական արիւնը չէ — նոյն իսկ այնքան սոսկալի, ինչքան «Հայկական կոտորածները», — որ սպանում է մի ազգ, այլ թափառական կեանքը, մուրացկանի պայուսակը, անվերջ տարագրութիւնը : Մի՛ մոռացիր, որ քսան տարուց աւելի է՝ ինչ օսմանեան բռնապետութիւնը և՛ հրդեհաձգութեամբ, ինչպէս վանում, և՛ սովով, ինչպէս վասպուրականում, և՛ կոտորածով, ինչպէս ամբողջ Հայաստանում՝ մի նպատակ միայն ունի, վերացնել, նւազեցնել հայերին, դարձնել Հայաստանը անապատ, որպէսզի այդպիսով վերջապէս մի ծանր գերեզման դնել այն մեծ, ոգևորիչ հարցի վրայ, որ 22 տարուց ի վեր դրադեցնում է ամբողջ Եւրօպան «Հայոց հարց» անունով և որը 600 տարւայ ստրուկ ժողովրդի սրտում ծնել է և՛ յոյս և՛ հերոսութեան ձգտում, և մարդկային մեծ իդէալներ.....

Այո՛, իդէալներ, որոնց իրագործման համար հայութիւնը միայն մի վայր ունի — Հայաստան : Մայր-հարենիքից դուրս՝ հայ ժողովուրդը ազգ չէ, այլ քաղաքացի, անպէտք և անկարևոր : Երկիրն է նրա պատմական դերի բե՛ռ, նրա կուլտուրական բաղձանքների հողը : Թափառական, չրջիկ կեանքը, տարագրութիւնը, սպանեց հրէական տաղանդաւոր ազգը նա մեզ էլ կրօպանի՝ հասցնելով ազգը հայկական ջրհորներ.....

Եւ այն, ինչ որ մինչև այժմ չաջողեց մեր թշնամուն իր միջոցներով, ժամանակակից հայ սերունդը կարծէք ուզում է աջողցնել իր անմիտ «քաղաքականութեամբ», հայկական այդ սպանիչ և յուսահատ թափառականութեամբ, այն

ոգուով՝ որ հային տանում է դէպի ամէն կողմ և երբէք դէպի Հայաստան.... 500 տարւայ ստրուկութիւնից յետոյ՝ հէլլէնը՝ հակառակ ամէն զոհերին՝ իր կուր դրօշը ցցեց աւերակածակ հայրենիքի կրծքում, այն հողում, որից մինչև այժմ էլ չէ չքացել նահատակների արեան բուրմունքը : Արիւնը նրան չը փախցրեց, այլ աւելի սերտ կապեց : Միթէ՞ մենք պիտի փախչենք : Մեր ստրուկ, մեղանից աւելի հալածական, մեղանից աւելի տգէտ նախնիքը՝ տանջանքների բովից անցնելով՝ մեզ թողին մի մեծ ժառանգութիւն — Հայրենիք : Ի՞նչ, միթէ՞ մենք պէտք է մեր ապագայ սերնդին Հայրենիքի փոխարէն թողնենք լուի հայկական քաղաքներ, ցիրուցան ովկիանի այս և այն կողմը, չչաղկապւած ոչ մի գագաժունքով, ժողովրդական ոչ մի դադափարով....

«Մեր հայրենիք — դեռ 40 տարի առաջ ասաց անմոռանալի հայրենասէրը

«Իր որդիքը արդ կանչում է  
Հանել իր վրէժ, քէն ու ռիս :»

Եթէ 40 տարի առաջ կային որդիք՝ որոնք խուլ էին և անընդունակ ըմբռնելու այդ կոչը, այժմ 20 տարւայ անսովոր դէպքերից և անլուր զոհերից յետոյ՝ չպիտի լինեն այդպիսիները : Այդ «վրէժ, քէն ու ռիս» կանչում է հային դէպի Մայր-Երկիր և ոչ դէպի Եւրօպա կամ Ամերիկա : Օտարները մեզ արդէն ճանաչեցին : Այժմ Յոյներ է մեր ապրելու տեղը, գործելու ասպարէզը : Այնտեղից թող հնչի մեր Բուռք, այնտեղից լուի մեր սպանուէլն ու աղերսանքը : Եւ այնտեղ անխրախոյս, յուսահատ տանջող ժողովրդի մէջ թող նորից բոյն դնեն այն բոլոր ոյժերը, որոնք

այժմ՝ յաճախ ապարդիւն կերպով՝ սպառուում են օտար երկրներում, հայրենիքից շատ հեռու, օտար աշխարհներում:

Դեռև՛ք Յրի՛շտ — ահա այսօրուայ մեր նշանաբանը:

Եւ թող սրանից յետոյ մեր պրօպագանդի ամբողջ գծի վրայ, պանդխտների շրջանում թէ գաղթականների մէջ, Պօլսի խաներում թէ կովկասեան թէյարաններում, Ամերիկեան հայոց ժողովասրահներում թէ Բալկանի ձորերում, Ատրպատականից մինչև Նեղոս ու Նեղոսից մինչև Դանուբ՝ ամէն տեղ և ամէն ժամանակ բարձրաձայն հնչի հայութեան ականջին նոյն յամառ հրաւերը, նոյն ազդու կոչը՝

Դ է պ ի Ե ր կ ի՛ր, գ է պ ի Ե ր կ ի՛ր:

900, ՅՈՒՆԻՍ,  
ԺԸՆԵՎ.

## ԱՄԵՐԻԿԱՅԻ ԳՆՐԻՒ ԿԱՅՆԵՐԻՆ

ՌԵՐՆԻՍ ԽՕՄԻՏԵ

Քաղաքական տարագիր չեմ ես այս անգամ, ստիպւած թողնելու անհիւրընկալ հայրենիքը, և ոչ էլ Հոգի-Դրամի գոհ, դուրս քշւած Մայր-երկրից, այլ սոսկ յեղափոխական այցելու, որ դաւիս է իր աչքերով տեսնելու և իր մատներով շօշափելու աստրատյանտեան դարիբական հայ գաղութը, հիւրընկալւած Մեծ Հանրապետութեան մէջ:

Ողջո՛յն ձեզ:

Ողջո՛յն ձեզ, Համիդեան անարգ ըէժիմի գոհեր, որ փախաք՝ առանց ոտքերի, երբեք յետ չը գալու անյուսութեամբ: Ողջո՛յն ձեզ, յեղափոխութեան գինւորներ, որ ապաստանեցիք այս երկիրը՝ կռիւն ու ազատութիւնը դարբնելու: Ողջո՛յն և ձեզ, կամաւոր պանդուխտներ Մուրացկան-Հայաստանի, որ հող ունէք, բայց հաց չունէք, ջուր ունէք, բայց ծարաւի վախճան չունէք, որ սար ու ձոր ունէք, բայց երգ ու մեղեդի չունէք:

Գիտեմ, «խապրիկներ» կուզէք ձեր աշխարհից, որ դեռ երէկ արեան ու սուգի մէջ՝ այսօր յեղափոխութեան ջրով լաացւած՝ պատրաստուում է վայելել իր Մեծ-Տանջանքը անցեալի, ու ոտք կոխել Ազատութեան ճամբան, երազանքը երէկւայ սերունդներին:

Տարիներ ու տարիներ՝ խապրիկներ շատ ըստացաք: Աղեխարշ էին նրանք, սարսափիչ ու ահաւոր: Կոտորածներ մեծ ու փոքր, աննախընթաց պատմութեան մէջ: Սով ու քաղց այն երկրին մէջ, ուր պատմական լէգէնդը — որպիսի՛ հեզնանք — եղեմական դրախտն է զետեղել: Հայածանք ու գնդան, կախաղան ու աքսոր — սովորական քրօնիկը մեր մօտաւոր պատմութեան, միակ արտադրութիւնը շղթայւած Հայրենիքի:

Ու նոյնիսկ այն օրերին, երբ ազատութեան դրօշակը պարզեց Օսմանեան Երկրի մէջ, երբ Վարազի լեռների լանջին և Տարօնի ձորերի մէջ Ազատութեան տաղն էր հնչում, օրե՛ր մեծ յոյսերի ու հոգեզմայլիչ երազների, Կիլիկեան ծոցից, անյաղթ Ձէյթունի կողքին, Մեծ-Եղեռնի բօթը հնչեց — անջնջելի նախատինք յուլիսեան յեղափոխութեան, պատմական բիծ՝ դրօշմուծ նրանց ճակատին, որ սիրում են պաշտօնավարել, բայց ոչ կառավարել, որ կրծքի վրայ շքանշաններ ունեն, բայց կրծքի տակ սիրտ չունեն...:

Ու լռեց բերկրութեան հանրաբերգը. ճակատները նորից ակօսեցին կնճիռներով, և սկսեց տատանման ու թերահաւատութեան շրջանը հայ մտածմունքի մէջ...:

Սակայն, վե՛րջ յուսահատութեան:  
Ողջո՛յն յոյսի օրերին:

Բարի ե՛րթ ձեզ, տատանման ու երկիւղի սև օրեր: Գնացէք թաղելու պատմութեան անյիշելի ծալքերի մէջ, հեռո՛ւ մեր առօրեայ կեանքից, որ նոր յղացումների շէմքին է կանգնած:

Մենք ուզում ենք հաւատալ Ազատութեան յաղթանակին և վաղւան եղբայրութեան, ուզում ենք ժպիտներ վայելել, ուզում ենք ամրանալ հաւատով, որ յաւիտենական չէ սովը, յաւիտենական չէ արիւնը, յաւիտենական չէ եղեռնը:

Ու որ՛քան յուսատու են ընթացիկ դէպքերը. — Եւրդըզը ազատւած Մեծ-Ոճրագործից, որ իր վերջին օրերն է համրում. փարթամ պալատները փակւած Համիդեան սպայակոյտի առջև, որ այսօր բանտերի խուցիկների մէջ իր սև բազդն է ողբում. պարլամենտի դռները՝ բաց, խօսքը՝ ազատ, «գեամուր»ը՝ բանակի մէջ, հպարտ՝ հանուր հայրենիքին ծառայելու գիտակցութեամբ, քաղաքական բանտերը դատա՛րկ, աներևակայելին սուլթանական երկրին մէջ, ճամբաները բաց, լեզուները ազատ...:

Մարած է Եւրդըզի հոգին:

Հանգած է բռնապետութիւնը:

Երէկ հայը արտասուք էր թափում, այսօր երգում է. երէկ նա շարական էր մրմնջում՝ իբրև ստրուկ, իսկ այսօր՝ ռազմի երգերը՝ իբրև զինուոր: Անցած օրերին յեղափոխական ռազմերգը զնդանների խուլ անկեան բաժինն էր, այսօր նա հնչում է հրապարակների վրայ և բոլոր ահանջներին...:

Համեստ խրճիթների մէջ, մանուկը՝ թոթոփախօս ու բերկրալից, Ազատութեան այբբենարանն է սերտում, և լեռների լանջերին՝ գեղջուկ հովիւը Արշալոյսին է նայում, քրդական եաթաղա-

նի փոխան. երդիքների մէջ՝ ծուխ է երևում,  
դաշտերի մէջ՝ հունձ, մառանների մէջ՝ հացի կտոր:

Մեռնում են Ահն ու Սարսափը:

Մահամերձ է հայածանքը:

Ու քաղաքական այդ ալեկոծութեան մէջ,  
ձևակերպւում է վաղւան ազատ + աշ + ացի, ընդ-  
դունակ քարոզելու Սիրոյ կրօնը, ընդունակ  
կուրծք տալու Ազատութեան յարատեման հա-  
մար, ընդունակ՝ սիրելու Հողը, առանց կրօնա-  
կանութեան, Մարդը՝ առանց ատելութեան:

Եւ այդ նորաբողբոջ, սկսնակ վերածննդեան  
Փօնի վրայ՝ հեռանկարւում է ազատագրւած հա-  
յութեան մերձաւոր ապագան, տէր՝ իր վիճակի,  
նւիրւած իր Մտքին ու Աշխատանքին, ձեռք  
ձեռքի տւած Օսմանեան ժողովրդներին, կապ-  
ւած հաւասար եղբայրութեան այնքան հաճելի  
չաղկապով:

Ողջո՞յն քաղաքական վերածնունդին:

Աստուածային ոյժեր չեն պէտք՝ այդ վերա-  
ծննունդի համար: Հայի ապագան՝ նրա տոկուն  
կամքին մէջն է: Ու այդ ապագան նոյնքան մեծ  
պիտի լինի, որքան մեծ էր անցեալի տանջանքը:

Մնացէք հաւատացող այդ մեծ ապագային,  
բազմակից հայրենակիցներ: Եղէք հաւատացող  
իբրև յեղափոխական, անվեհեր՝ իբրև Ֆէդայի,  
տոկուն՝ իբրև հայ, և ազատութեան նաւը կը  
փրկւի, որքան և դառնաչունջ լինի քամին, որ-  
քան և փոթորկոտ՝ ալիքը քաղաքական...:

Միշտ հաւատացող, միշտ ամուր, միշտ յե-  
ղափոխամիտ՝ նայեցէք դէպի Երկիր, որ մայրն  
է մեր մեծութեան ու մեր բոլոր յոյսերի, ուր

երէկ սերունդներ տանջւեցին և մեծ-տանջանքով  
ազատութեան հիմքը դրեցին:

Յարգա՞նք Մայր-Երկրին:

Յարգա՞նք Տանջանքի-Սերնդին:

Այս երկիրը, ո՛ւր հիւրընկալեցիք սև օրերին  
ազատութեան օրրան է ու աշխատանքի աննը-  
ման հնոց: Նա գերեզմանն է ստրկութեան և  
ծուլութեան:

Եղէք արժանի աշակերտներ հիւրընկալ Մեծ  
Նահանգների, և տարէք ձեզ հետ դէպի Բիբլի-  
ական Փոքր-Ասիան ամերիկեան մեծ սիրտը,  
ստեղծագործող աշխատանքը ու ազատութեան  
անսպառ սէրը:


Երէկ մեծ եղանք տանջանքիդ մէջ:

Այսօր մեծ պիտի լինինք աշխատանքիդ մէջ:

Վաթսուն տարի առաջ հայ սերունդը Մեծ-  
Յեղափոխութեան Հայրենիքից, որ աննման Ֆը-  
րանսիան է, տարաւ դէպի Պօլիս՝ Օսմանեան Հայ-  
րենիքը՝ ազատութեան առաջին թոթովանքը:

Քսան տարի առաջ, նոյն այդ երկրին մէջ,  
ազատագործ հայ սերունդը Յեղափոխութեան  
Դրօշը պարզեց, ու արեան և սոսկումի միջով  
քալեց դէպի ներկայ Մեծ Օրերը:

Ճամբաները բացւած են, և այժմեան սե-  
րունդին, հաստատուած բոլոր վայրերի և բոլոր  
գաղութների մէջ՝ փիճակւած է մի նոր դեր, —  
գնալ դէպի երկիր, ամբանալ նրա կրծքի վրայ:  
Աշխատանք ստեղծելու համար, ու այդ աշխա-  
տանքին մէջ և նրա միջոցով հրաշակերտել Հայ-  
րենիքի և ժողովրդի մեծութիւնը, երեսնամեայ  
նպատակակէտը մեր քաղաքական լաւագոյն ե-  
րազանքների:



Ողջո՛յն նորազատ երկրին :

Ողջո՛յն հաւառ աշխատանքին :

Թո՛ղ այս լինի, գաղթական հայրենակիցներ, ձեր առաւօտեան աղօթքը և երեկոյեան մեղեդին, առօրեայ « Հայր մերը » ամէն մի հայի, որ Միտք ունի, որ Սիրտ ունի, որ Դաւանանք ունի :

1910 ՍԵՊՏԵՄԲԵՐ

ԲՅՍՏՅՆ

## ԱՎԼՒՓՕՐՆԻԱՅԻ

### ՊԸՆԴՈՒԻՏ ՀԱՅՆՐԻՆ

ՄՐՏԻ ԽՕՄԻՆԵՐ

Երբ գնացքը յաղթական սուլոցով ձեքդում էր Սալտի լիճը, ուր սրանից հագիւ յիսուն ձմեռ առաջ փոթորիկն էր միայն տիրում անսանձ այիքներին, ես, պատահական մի անցորդ, վազօնի անկիւնում վանդակւած, մտածում էի՝

— Ո՛ւր կ'երթամ,

Ո՛ւր, այսքա՛ն հեռու, դէպի Խաղաղականի ափին թառած երկիրը, որ Կալիֆօրնիա անունն ունի, երբեմն անձանօթ հայի ականջին ու սրբտին, չը լսված Հայկական բարձրավանդակի և ոչ մի անկիւնում :

— Ո՛ւր կ'երթամ...

Դէպի զարիբական հայերը, որ հեռո՛ւ նեա՝ ված Մայր-Երկրից, ապաստանած Մեծ-Հանրապետութեան ծայրագաւառի լանջին, Կոուենկ կ'ուզեն, որ իրենց աշխարհից խապրիկ առնեն, եկուր այցելու կ'ուզեն, որ սիրական վաթանի կա-

րօտը ամոքեն , լեզու կուզեն , որ սրտերը հովա-  
ցնեն...

Ու այսօր ձեր մէջ , պանդուխտ հայեր , հան-  
գիստ առած ձեր քնքոյշ հայեացքներով , ձեր  
այդքան բարեկամական «չէյքհէնդ»ներով , ես  
հպարտ եմ բոլորիդ հայրենակարօտ մրմունջնե-  
րով , այն խորունկ հետաքրքրութեամբ , որ դէ-  
պի Մայր-Ներկիրն ունէք : Եւ նոյն ժամին տըլս-  
րասիրտ , սրտաբեկ և մեղամաղձոտ , երբ տես-  
նում եմ այսքան հայեր , հազարաւոր հայեր ,  
ոմանք արդէն սպիտակահեր , միւսները դեռա-  
տի , մի մասը Հայաստան ծնւած , միւս մասը կա-  
լիֆօրնիայի զաւակ , բոլորն էլ հատւածը մեծա-  
տանջ ժողովուրդի , որ մարտիրոսացաւ ամբողջ  
30 տարի , և բռնապետութեան սանձարձակման  
ահաւոր րոպէին՝ ձեղքւեց միջից , ու ինչպէս  
տերեւը հողմի առջեւ , դուրս քշւեց հայրենի  
օջախից , փախաւ հեռու , շա՛տ հեռու , կտրեց  
ովկիանոսը Ատլանտեան , ցամաքը Ամերիկեան  
ու կանգ առաւ Սաղաղականի ափին «որից դէնը  
ջուր միայն կայ» , որպէսզի «խաղաղութիւն»  
գտնէ , հաց գտնէ , ապաստան գտնէ , ու օտար  
ապաստանի մէջ երազէ վաթանը , եօթը սարերի  
ու եօթը ծովերի յետին մնացած Մայր-Հայրենի-  
քը , ու այդ երազի մէջ մոռնայ արիւնն ու ար-  
տասուքը , եաթաղանն ու սարսափը...

Դա ստորաքարշ վախկոտների փախ չէ , գը-  
տեմ , և ոչ էլ առելութիւն դէպի այն Ներկիրը ,  
որ գերեզմանոց էր մեծերի համար , և որբանոց  
փոքրերի համար : Ո՛չ : Պատի՛ւ հայութեան՝  
Մեր ժողովուրդը երկար դիմացաւ , երկար ատեն  
տանջւեց , փորձեց ինքնասփոփման շատ ձևերը՝

Քայց երբ բռնապետութիւնը դարձաւ անսանձ ,  
ինչպէս Համիդ , պաշտօնական Եւրօպան անտար-  
բեր , ինչպէս Վիլհէլմ , մարդիկ անխիղճ , ինչպէս  
Գիպլօմատ , երբ արիւնը լճացաւ՝ ջրերի նման ,  
և դիակները դիզւեցին՝ քարերի նման , նա ուզեց  
ապրել , ուզեց կենդանի մնալ , իբրև բեկորը վի-  
րաւոր հայի , ա՛յլ հողի վրայ , օտար աշխարհում ,  
նոր երկնքի տակ :

Եւ դուք , իմ վիրաւոր հայրենակիցներ , կու-  
զէիք Հայաստանի մի կտորը վերաստեղծել նոր  
հորիզոնների տակ , կուզէիք Հայ-Ներկիրը Սաղա-  
ղականի ափունքը փոխադրել , և այս տեղ բեղ-  
մաւորել հայ զգացմունքն ու պատմութիւնը ,  
նոյնիսկ հայի աշխատանքը...

Այդ աշխատանքը , ո՛հ , եղաւ յամառ ու չար-  
քաշ : Գիտեմ այդ . տեսայ ու լսեցի : Ձեր վիրա-  
ւոր մատներով դեռ կոյս մնացած հողը ախօսե-  
ցիք . ձեր կնճռածածկ ճակատից հոսող կաթիլ-  
ներով այս հողը պարարտացրիք . Հայաստանից  
այս երկիրը փոխադրեցիք ձեր պապերի անման  
աշխատանքն ու տոկունութիւնը ու այն պտուղ-  
ները , որոնց անունը Արաքսի ու Տիգրիսի հետ է  
կապւած...

Ու ես , թէև ո՛չ ազգամուլ , անձանօթ ատե-  
լութեան ու նախանձի զգացմունքին , տիրում  
եմ ու սրտաբեկուում , երբ այս Անդաստանի հան-  
դէպ , որ ձուլումն է քաղաքակրթութեան ու աշ-  
խատանքի , յիշում եմ մեր Ներկիրը , այն Պար-  
տէզը , որ հային է տրւած : Ձէ՞ որ ամէն ազգ  
մի պարտէզ ունի , - Հայրենիքն է այդ - մշակե-  
լու ու ծաղկեցնելու , դարձնելու նրան հնոցը իր

երջանկութեան, սեփական Դրախտը, քանի որ, հասկացէք վերջապէս, Դրախտը, նոյնիսկ եղեմական, երկնակամարի ետևը չէ, ո՛չ էլ ծովերի տակը, այլ երկրի երեսին, մեր սեփական ոտքերի տակ, և մենք է, որ պէտք է ստեղծենք նրան, ոռոգենք նրան, զարդարենք նրան...

Յրանսիացին ունի իր պարտէզը — Մեծ Յրանսիան, որը ոռոգեց իր արիւնով՝ Յեղափոխութեան օրերին, և իր քրտինքով՝ աշխատանքի ժամանակ: Հեղեմեան ժողովուրդը ունի իր պարտէզը — սիրուն Շվէյցարիան, եղեմացած գիւղացու գերանդիով և Վիլհելմ Տելլեան նետով, մէկը նշանաբանը՝ աշխատանքի, միւսը՝ նշանաբանն ազատութեան: Չեր հարևան Ամերիկացին հպարտ է իր լայնածաւալ Պարտէզով — Միացեալ Նահանգներն է այդ, ուր աշխատող քաղաքացիների ձեռքն ու ստեղծող միտքը հրաշքներ են գործում:

Ու փոքրիկ ազգերն իսկ ունին իրենց պարտէզները. — Բօլքարացին իր պարտէզն է ոռոգում — նորազատ Բօլքարիան. Յոյնը իր պարտէզը — մեծանուն Յունաստանը: Ո՞վ պիտի մըշակէ Հայկական պարտէզը — Հայ երկիրը, որ արիւնքամ եղաւ 30 տարի, ոտնակոխ՝ ոճրագործ ոտքերով, դարձաւ խոպան՝ թէև երբեմն շտեմարան առատութեան, աւերակ՝ թէև երբեմն ծաղկոց եղեմական...

Առաջինն էինք, վերջինն եղանք:

Սակայն, միթէ՞ պիտի դիմանանք այդ ամօթին, կրե՞նք անունը անճար ազգի, որ Հայրենիք ունի, բայց սպաստան չունի, հող ունի՝ մաճ բռնող չունի. ունի գետեր՝ առանց նաւերի, լը՛

ձեր՝ առանց առաջատի, հանքեր՝ առանց քլուների, լեռներ ու ձորեր՝ առանց տաղի ու սոխակի. Ի՛նչ հաշիւ պիտի տանք պատմութեան: Աշխարհի երեսին բոլոր Պարտէզ — Հայրենիքները մշակւած, ի աշխատանքով ու երգով, իսկ Հայ — Պարտէզը, խոպան, աւերակ, անչէ՛ն ու անծուխ...

Մայր մտան սարսափի օրերը: Շղթան փչըրւած է: Գահակալ-բռնաւորը՝ գերի, գահը՝ ժողովրդական կամքի տակ: Ու ճամբաները բաց, որպէսզի տարագիր որդիքը տուն դառնան, ողջո՛յն տան Հայրենիքի լեռներին ու ձորերին, հընչեցնեն ազատութեան երգը, ու այդ երգի մեղեդիով խնկելի Պարտէզը մշակեն:

Դառնանք, փախստական հայեր,

Դառնանք, պանդուխտ հայեր:

Դառնանք դէպի Վաթան, դէպի Մեծ Տանջանքի Չորը, որ վաղւան օրը Մեծ-Գաղափարների օրօրանը պիտի լինի մերձաւոր Արևելքի խաւարի մէջ, ու վերսկսենք մշակութեան գործը յանուն այն մեծ իդէալի, որի անունով այդ երկիրը արեամբ ու դիակներով լցւեց...

Ճամբաները բաց են:

Հնչում է ժամը դարձի:

Երբ գարնան սիրուն ու յուսաբեր օրերին կը սկսի աշխատանքը այս գեղանի երկրի, երբ ձեր եղունգներով հողը կը ճեղքէք և ժպիտով կը վաթեղէք կալիֆօրնեան ձեր ագարակների նորաբող յեղէք կոկոնները, յիշեցէ՛ք, որ այնտեղ, փոքր-Աբոջ կոկոնները, յիշեցէ՛ք, որ այնտեղ, Հայրենիք սիական հեռու տարածութեան վրայ Հայրենիք Պարտէզը կայ, որը ձեզ է սպասում, տարագիր որդոց կարօտալի դարձին, որպէսզի գան և իրանց

հետ կեանք բերեն, գիտութիւն բերեն, երգ ու երջանկութիւն բերեն...

Ու եթէ ձմրան հանգստի կամ աշնան հունձքի ձեր խաղաղ ժամերին, երբեմն կը վերյիշէք վաթանը, և գուցէ ինձ էլ, հայ վերածնութեան համեստ մի մշակին, որ կռուենկի նման եկաւ ու անցաւ, խնդրում եմ, երկու բառ դրէք իմ համեստ անւան կողքին, բառ, որ շատ վաղուց, իմ մեղեդին է, իմ երգը, իմ երազանքը՝

Դէ՞՞ր երկիր...

Դէպի երկիր, որ աղատագրւած է, դէպի վաթան, որ ձեզ է կանչում, դէպի երկիր, որ ձեր կարօտովն է թողում, որ այդ կարօտի ախիւն է քաշում...

Դէպի երկիր:

Ականջ դրէ՛ք, պանդուխտ հայրենակիցներ, Մայր-Հայրենիքի կոչն է այդ, կոչ բերկրայից, յաղթական դարձի, ոչ թէ տանջանքի ու կռիւի համար, ինչպէս Հին օրերին, այլ վերածնութեան ու Աշխատանքի համար, որ խորհուրդն է նոր Օրերի:

Ականջ դրէ՛ք այդ կոչին:

1910, ՆՈՅՆՄԱՐԵՐ

ՅՐԷԶԵՍ

## ՄԻՇՏ ԴԷՊԻ ԵՐԿԻՎ

ՆՐԱԶ-ՕՐԵՐ

Տասն տարի առաջ էր:

Եւ ի՛նչ շիւան օրեր:

Հայաստանը՝ կմախք, հայութիւնը՝ ուրւական, որ կծկւած ու մահազոյն՝ անցնում էր քաղաքից քաղաք, վիւայէթից վիւայէթ, առանց հանգստի, անապատան: Տներ՝ առանց ծնունդի: Ընտանիքներ՝ առանց յարկի: Դպրոցը՝ լեռարանի վերածւած: Եկեղեցու ճամբան մամուապատ: Լեզուներ մրմունջով, բայց առանց խօսքի: Աչքեր, արտասուապատ, առանց լոյսի:

Սև օր, անէծքի օրեր:

Դաշտի մէջ աշխատանք ու քրտինք, բայց աշխատաւորը՝ սովատանջ: Արտերը հունձով լի, բայց հունձքը՝ բէյի ու փաշայի ձեռքում: Լեռների դագաթին՝ աշիրէթապետի որոտը: Զորերի մէջ՝ փաշայի հրամանը: Արիւն՝ շէմքերի վրայ, սով՝ շէմքից ներս: Դիակներ՝ մածի վրայ, դիակներ գուլթանի յետև, ախօսների մէջ...

Ու այն սև օրերին իսկ՝ նոյնն էր մեր երգը, նոյնը մեր հրաւէրը՝

Դէպի Երկիր՝, դէպի Երկիր՝:

Եւ գնում էին:

Ֆէդային՝ հրացանը գրկած. Յեղափոխակա- նը՝ ծրագիրը ծոցում. Ռազմիկը՝ ուռմբով զրա- հաւորւած — և բոլորը միասին աստանդական՝ մերթ սարերի ծերպերին, մերթ արտերի մէջ գաղւած, մերթ վանական թազստոցներում...

Գնացին հատիկ-հատիկ, գնացին քարվանսնե- րով, գնացին աներկիւղ, անընակ լանջերի վրա- յով, գիշերւան խաւարով պատած, գնացին որ կուրծք տան եաթաղանին, իրանց մատներով անդուլթ սրի ծայրը բռնեն, և կուլ տան բռնաւո- րի գնդակը, «Հարայ» կոչող իրանց բերաննե- րով...

Իսկ այժմ:

Ի՞նչ քաջալերիչ նորապատկեր:

Բռնութիւնը՝ խորշոմած ու դեղնած: Շղթա- ները՝ փշրւած: Երեկւան շղթայապետը՝ այսօր ինքը շղթայւած: Ստրուկները՝ երգի, իսկ ստըր- կացողները ողբի մէջ: Ճամբաները, բերանները, կոկորդները բացւած: Գութանի երգը՝ արտի եղբին, ազատութեան տաղը՝ գիւղի շուրջը: Ու հո՞րդոնների վրայ՝ Արշալոյսը Ազատութեան, որ կանչում է տարագիր զաւակները դէպի սուն, դէպի վաթա՛ն:

Սակայն այս անգամ ոչ թէ կուէլու, այլ վայելելու, ոչ թէ մահաբեր արեան, այլ կեն- դանարար քրտինքի, և ոչ թէ ջարդի, այլ շէնքի համար:

Դէպի վաթա՛ն:

Ու այդ վաթանի մէջ հրաշակերտ Աշխա- տանքը, որ՝ դարերի պարծանքը եղաւ, շտեմա- րանը մարդկային երջանկութեան,—մտքի ու ձեռքի Աշխատանքը, որ գիտէ երկիրը պատռել՝ թագնւած հարստութիւնները դուրս բերելու, գետինը ախօսել՝ սերմ գցելու, որ գիտէ լեռներ ու ձորեր ճեղքել՝ շոգիի սուլոցը տարածելու այն վայրերում, ուր ցարդ ողբի երգն էր տէրն ու տիրական...

Դէպի վաթա՛ն:

Երթա՛նք, պանդուխտ եղբայրներ, դէպի այն վայրերը, ուր պատմութեան կապանքը հայ ա- նունն է շղթայել, ուր լեռների վրայ, ձորերի մէջ դեռ թոթովում է արձագանքը անցած տանջանքի ու նորածիլ յոյսերի, դէպի դամբա- րանը մեծ զոհերի, որոնք լուրթեան ու խորհուր- դի մէջ՝ երգում են երգը՝ ամբողջ մի երկրի որ շղթայակապ էր, ամբողջ մի ազգի՝ որ ըստ- րուկ էր...

Յիշում էք մեր երազները:

Այդ երազները հիւսեցինք հայրենի օջախից հեռու, օտար երկինքների տակ, հալածանքի ա- դիսարշ օրերին,— մի օր ժընեվ, կեդրոնավայրը բոլոր հալածականների. մի այլ անգամ Լօնդօն, հիւսիսեան հիւրասրահը քաղաքական փախստա- կանների. մի օր Փարիզ, քաղաքամայրը մեծ դադափարի և մեծ պայքարի, և երբեմն Աթէնք, Թիֆլիզ, ուր հազիւ շունչ առաւ դարիք գինւորը վերածնւող գաղափարի...

Ու այսօր՝ օրն է երազների մարմնացման!

Թո՛ղ հնչէ երգը՝ մեծ վերածնութեան: Ո՛չ մի վախկոտ դէմք, ո՛չ մի կորացած մէջք: Հը-

պարտ դէմքեր—ստաննների մէջ և լեռների վերայ: Շտկւած մէջքեր — դիւանատների մէջ և գործավայրերում: Հրամանի փոխան՝ օրէնք: Փալատիկայի տեղ՝ դպրոց: Հարեմի աւերակների վրայ՝ կինը ազատ: Տանջանքի տեղ՝ վայելք: Եղունգների փոխան՝ գործիք հողը պատռելու: Խաւարի տաճարոսի վրայ՝ գիտութիւնը տիրական: Ու ամեն տեղ շարժում, կեանք, պայքար...

Թող հնչէ նոր Խօսքը:

Թող փչէ Մրրիկը ազատաբեր:

Մարզենք նոր սերունդը—պատանեկութիւնը բոլոր կրօնների և բոլոր ցեղերի, նոր շնչով, նոր ճամբով, նոր հանրապատկերներով.—համերաշխութիւն՝ մոլեռանդութեան փոխարէն, գիտութեան հաշտարար շունչը՝ կրօնական կռիւների փոխան, ատելութեան մատնանների տեղ՝ կտակարանը Եղբայրութեան ու Ազատութեան...

Դիակոյտի վայրերում ու անցած Եղեռնի աւերակների վրայ՝ կը կառուցանենք մեծագործութեան արձանները — կոթող Ազատութեան, Արձան Եղբայրութեան, կոթող Աշխատանքի, Արձան Յեղափոխութեան, ու այդ Խօսուն Գարբերի շուրջը ու նրանց հովանիի տակ՝ կը կնքենք Ազգերի Հաշտութիւնը, Հաշտութիւն տեւական ու գիտակից, զօրեղ ու հրամայիչ!

Կը բոլորեն նոր տարինն՛ր:

Եւ գիտութիւնն ու գաղափարը կը հոսեն Պօլի վրայով, կամուրջը Արևմուտքի ու դժբախտ Արևելքի, կը հասնեն վասպուրական, Դիարբեքի, Սիփան լեռների շուրջը, Եփրատի ու Տիգրիսի հովիտները, այն մոռացված վայ-

րերը, ուր դարեր ու դարեր հեկեկանքն էր միակ խանգարիչը գերեզմանային լուսթեան... Երկաթուղին կը ձեղքէ այն սարերն ու ձորերը, ուր երբեմն միակ սուլոցը՝ մահաբեր գնդակի սուլոցն էր: Դպրոցի մէջ՝ Հողի եղբայրները, ամէն առաւօտ «Ազատութեան երգը» կը հնչեցնեն բարձր բռնած հանուր Դրօշակը, — Դրօշակը Փոքր-Ասիական Համադաշնակցութեան: Մզկիթն ու եկեղեցին միմեանց բարև կուտան: Աշխատաւորները միացած ու շողկապաւած՝ կը համբուրեն ծնող-հողը, մայրը՝ Աշխատանքի և Եղբայրութեան!

Եւ ատելութեան ու թշնամանքի Տարտարոսից բարձրացած ժողովուրդները կը քալեն դէպի՛ բարձր, դէպի՛ սրբազան խորանի հեռաւոր՝ բայց գրաւիչ սանդուխտները, ուրկից բացվում են նոր հորիզոններ, անծայր տեսարանները գեղեցկութեան, արդարութեան ու վայելքի...

Քալենք դէպի Երկիր՛ր:

Քալենք միասին, քալենք շարքերով, ձեռք տւած բոլոր դրկից ցեղերին, թշնամի՛ ստրկութեան օրերում և բարեկամ՝ ազատութեան մէջ. քալենք դէպի Սպիտակ լեռան գագաթը, որ դարեր շարունակ սգաւոր վկան եղաւ մեր տանջանքին ու վշտին, տնկելու պատմական Մասիսի գագաթին՝ Ազատութեան Դրօշակը, երբեմնի Երազը հայ դրօղի ու անցած սերունդների...

Ողջո՛յն Ազատութեան Դրօշակին:

Դրօշակ՝ Մասիսի ծայրին ահա փառունակ յաղթանակը՝ բռնութեան դէմ, անթառամ խորհրդանշանը ազգերի եղբայրութեան՝ Երեքպետեան լեռան շուրջը:

Դարեր ու դարեր գեղատեսիլ լեռը մնաց անձեռակերտ միջնաբերդ—պաշարած Երրեակ բռնապետութեամբ, բռնապետութիւն Հիւսիսի, Յարի գայիսոնի տակ, բռնապետութիւն Իրանի՝ Շահնշահի ծիրանու ներքեւ, բռնապետութիւն Օսմանեան երկրի, սուլթանական եաթաղանի տակ: Եւ այսօր Երրեակ բռնապետութեան ամբողջը ճեղքւած է—պարսիկ սահմանադրականներէ երգը, միացած օսմանեան Ազատութեան ազգմերգին՝ սրտապնդիչ թնդիւն է գցել գեղանի կովկասի ձորերի մէջ, ուր Երկզլխեան «կարապը» իր վերջին երգն է հիւսում..

Դէպի Երկիր:

Դէպի վաթան, հիմնադրելու նոր կեանքը, երազների ու վայելքի մեծ շրջանը—շրջան ազատ մտքի, արդար աշխատանքի, շրջան ինքնավար ստեղծագործման.—Թիւրքը՝ ինքնավար իր վաթանի մէջ, Հայը՝ ինքնավար իր հայրենիքում. Յոյնը՝ ինքնավար իր բնագաւառի մէջ. Մակեդոնացին՝ ազատ իր վաթանում. Արաբը՝ ինքնավար իր երկրի մէջ. Քիւրտը՝ ազատ իր օջախում: Եւ այդ բոլորը մի ամբողջական, ներդաշնակ փունջի մէջ—Օսմանեան Համարշնայութիւնը Փոքր Ասիայի, —տարբեր լեզուներ, բայց առանց կրճտոցի, ինքնավար մարմիններ, առանց բաղխման, տարբեր կրօններ. առանց ատելութեան, այլազան ազգեր՝ առանց ջարդի...

Ու այդ Մեծ օրերին, մոռացած անցեալի տանջանքը, որ մեր մեծութիւնն է, հպարտ պաղպայ Երազներով, որ մեր իրաւունքն է, հատուած մեր սեփական հողի վրայ, նոր շունչ առած եղբայրութեան ու մարդկութեան հնո-

ցում, դպրոցների ու հանդէսների մէջ, արձանների շուրջը, Ազատութեան տարեդարձներին և Աշխատանքի տօներին՝ ձեռք տւած հարեան ազգերին— Թիւրք, յոյն, արաբ, բուլկար, ալբան, ասորի, քիւրդ, քրիստոնեայ թէ մահմեդական, ասուածապաշտ թէ գիտապաշտ, գիտութեան խօսքեր կը հնչեցնենք՝ ազգերի նոր երգը, Երգերի երգը՝ Փոքր-Ասիական Էնթերնացիօնալը, — մեծագոյն յաղթանչանը Գաղափարի ու Յեղափոխութեան, տիրական վերելքը նոր Մարդու և նոր Մտքի...

Երազ օրեր:

Այդ երազը, պանդուխտ եղբայրներ, մեր կամքի, մեր բազուկի, մեր Աշխատանքի ու մեր հաւատի մէջն է: Մե՛ղք թերահաւատներին: Հե՛ռո՛ւ առաջնապահ շարքերից՝ նոքա, որ կոյր են՝ ու ապագան չեն տեսնում, որ երբորուն են՝ ու յաղթանակը չեն գուշակում:

Հաւատանք ու աշխատենք:

Աշխատենք ու քալենք:

Քալենք դէպի՛ Երկիր:

Տարիներ ու տարիներ գնացինք կուելու ու կուլի մէջ մեռնելու: Այժմ դառնանք՝ վայելելու ու վայելքի մէջ ապրելու: Երբեմն ոխ ու վրէժտարանք դէպի վաթանը: Տանենք այժմ եղբայրութեան ոտք: Կար ժամանակ, որ կերթայինք դէպի Տանջաձորը՝ զէնքով ու ումբով: Տանենք մեր պայուսակի մէջ այժմ զէնքի հետ և՛ գիրք, կապարի կողքին՝ և՛ միտք:

Արիւնը մօտ է չորնալու:

Արտասուքը սկսում է ցամքել:

Վիրաժածիկ հայրենիքը ձեզ է կանչում, դա-  
րիք հայրենակիցներ, կարօտ ձեր տեսութեան,  
ձեր փայփայանքին, դարձող զաւակների տաք  
համբոյրին :

Դէպի Երկիր, Աշխատաւորներ :

Դէպի Երկիր, Ռազմիկներ :

Դէպի Երկիր, Հայրենակիցներ :

1911, ՄԱՐՏ,  
ՆԻԻ ԵՅՐԳ



ՀՀ Ազգային գրադարան



NL0328342

18.254